

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՇԱՐՔԵՐ ԵՒ ՁԵՆՆԱՐԿՆԵՐ

Հյուսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Ս. Յովնան արքեպս. Տերպերնանի յարուկ կարգադրութեամբ եւ որոշումով, «Թարգմանչաց Լսարան» անունի փակ, Առաջնորդարանի համալիրին մէջ պիտի սկսին հետեւեալ ձեռնարկները.

Ա) Սեպտեմբեր 2004էն սկսեալ «Քահանայական Ասպարէզ»-ին նուիրուող թեկնածունեութուն համար համապարփակ ծրագիրով երկու փարուան յարուկ դասընթացք մը կազմակերպուած է, որ կ'ընդգրկէ Հայ Եկեղեցոյ եւ Հայ կրօնական մշակոյթին վերաբերող հիմնական նիւթերը.

Սուրբ Գրային գիտութիւններ,
Հայ Եկեղեցոյ պատմութիւն,
Հովուական աստուածաբանութիւն,
Հայկական ծէս եւ Ծիսական աստուածաբանութիւն,
Քարոզ եւ բարոզխօսութիւն,
Ընդհանրական Եկեղեցոյ Հայրեր,
Հայ կրօնական գրականութիւն,
Վանականութիւն եւ քրիստոնէական հոգեկանութիւն,
Պատմութիւն հայ վանականութեան,
Հայ վանական հոգեկանութիւն,
Հայ կրօնական արուեստի պատմութիւն,
Հայ իմացական մշակոյթի պատմութիւն
Հայ պատմագրութիւն եւ հայ ինքնութեան գաղափարախօսութիւն,
Դասական հայերէն կամ գրաբար լեզու:

Բ) Հոկտեմբեր 20, 21, 22, 2004ին փետի պիտի ունենայ եռօրեայ հաւաք մը, միայն թեմիս հոգեւորականներուն համար: Ներկայ պիտի ըլլան նաեւ սարկաւազներ: Այս երեք օրերու ընթացքին փետի պիտի ունենան աղօթքներ եւ օրական չորս դասախօսական ելոյթներ (ընդամենը 12 դասախօսութիւն):

Գ) Հոկտեմբեր 2004էն սկսեալ, դասախօսական երեկոներու ուրիշ շարք մը պիտի սկսի, որուն մուտքը ազատ պիտի ըլլայ հանրութեան: Այս ձեռնարկը փետի պիտի ունենայ ԱՄԻՍԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ եւ պիտի ընդգրկէ Աստուածաշունչին նուիրուած շարք մը ելոյթներ, ինչպէս նաեւ կրօնական, եկեղեցական, եկեղեցա-պատմական, բարոյական եւ հայ նիւթական ու կրօնական մշակոյթին վերաբերող բազմազան նիւթեր:

Դ) Հոկտեմբեր 2004ին, ՀԱՅ ԳԻՐԵՐՈՒ ՍՏԵՂԾԱՆ 1600ամեակին առիթով, Առաջնորդարանի սրահին մէջ փետի պիտի ունենայ եռօրեայ ՀԱՅ ԳԻՐՔԻ ՕՐ ձեռնարկ մը, ընդգծելով Հայ Գիրքին կարեւորութիւնը եւ նշանակութիւնը մեր կեանքէն ներս:

Ձեռնարկներու պատրաստանարու վարիչն է Ս. Տաճար ծ. վրդ. Եարպըմեան:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ